

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՅ

ՅԵՐԻՏԱՍՏԱՐԴ ԳՐՈՂԸ

ՄԱՐԴԸ

ԽԱԶՄԱ ԺՈՂՈՎՐԴԻՇԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՄԱՐՄԿԱՆՔՆԵՐԻ

891.71

9 - 83

ՄՈՍԿՎԱ 1926

31 AUG 2006

№ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ 1.

30 NOV 2010

4-83

<sup>այս</sup>

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻՑ

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂԸ

ՄԱՐԴԸ

0227-7  
096 - 5/129

554



Կ. Ս. Հ. Ա. ԳՈՂՈՎԿՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1926

21 MAR 2013

BRÜDER VON OB.

Напечатано в типогр. Госиздата  
„Красный Пролетарий“  
Москва, Пименовская  
ул., д. № 16, в коли-  
честв. 4000 экз.  
Главлит  
№ 49949.  
□ □  
□

10680

## ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՈՈՂԵ

Լավ չե՞, յերբ գլուխը շատ յերկրպագումներ ունի: Միայն ճահճային բույսերին չի վնասում ավելորդ խոնավությունը: Կաղնիներին չափա- վո՞ր խոնավություն ե պետք:

Յես պղիախ պատմեմ մի յերիտասարդ գըողի  
մասին, վորը միանդամից մեծ համբավ ձեռք  
բերեց, այն մասին, թե նա ի՞նչպես ծիծաղելի  
և անկարգ յեր պահում իրեն՝ կուլ աալով գո-  
վասանքների տարափը, և թե ի՞նչ պատճեց նրա  
հետ, յերբ նրա գլուխը պտույտ եր գալիս փառը  
ու պատվիզ,

Սա մի պարզասիլտ յերիտասարդ եր, բայց  
վո՞չ բոլորովին հիմար, և իր ընկերներից արհես-  
տով տարրերինում եր նրանով, վոր միշտ անկեղծ  
եր, ուստի և ամեն որ հակասում եր իրեն;

Նա ապրում եր մի այնպիսի յերկրում, վորի գրականությունը համաշխարհային հոչակ եր վայելում, և յերբ նա նո՞ր եր ժողովրդականություն ստանում ու յերքեմն անհաջողությունների հանդիպում, — թերահավատությամբ յեր

վերաբերվում դեպի իր ձեռք բերած այդ համբավը և մտածում. «Տարորինակ ե—խոսում ես՝ չեն լուս, փող ես փչում՝ հրճվում են, ծիծաղում»...»

Մեր այս յերիտասարդը յերբեք համեստ չեր: Բայց նա գիտեր իր արժեքը, ահա՛ թե բանն ինչում ե... Յեվ մեկ ել՝ նա գիտեր, վոր իր հայրենի յերկում գոյություն չունի հասարակություն, այլ միայն ժողովուրդ, և վոր իսկապես համբակությունն ե ստեղծում գրական և այլ համբավներ:

Ժողովուրդը ապրում ե իր ուրույն կենցաղով, հավատում ե գրացներին, իր ամբողջ կյանքում աշխատում ե, բայց միշտ ել քաղցած և մնում, և ամբողջ գրականությունը, հասարակությունից սիրված ուրիշ գեղարվեստների հետ միասին՝ պատրաստ ե փոխել մի չնչին բանի հետ:

Թեպետ մեր յերիտասարդը շատ լավ գիտեր այս բոլորը, սակայն—նա մարդ եր: Յեվ բոլոր այս բոլորը, սակայն—նա մարդ եր: Յեվ բոլորը, գրողներն ու խորագետ մարդիկ շատ ըլլ, բոլոր գրողներն ու խորագետ մարդիկ շատ թե քիչ չափով սահմանափակ հասկացողության տեր են: Նա զգաց, վոր ամբոխի լարված ուշադրությունը դեպի իր ուժերը՝ հաճելի յե իրեն: Գրությունը դեպի իր ուժերը՝ հաճելի յե իրեն: Նա սկսեց իր ընթերցողներից փաղաքշական նամակներ ստանալ:

Մի ընթերցող գրում եր՝ «Տաղանդավոր», մի

ուրիշը սկ թանաքով սպիտակ թղթի վրա արտահայտել եր՝ «Մեծապատիվ», մի այլ ընթերցողուհի յել գրել եր հասարակ, բայց ուժեղ՝ «Հոգակս, շնորհակալ եմ», կարծես թե գրողը նրա համար կոֆտացու մետաքսեղեն դրկած լիներ: Իսկ մի գրավաճառ ել նամակ եր ուղարկել հետեւյալ բովանդակությամբ. «Մեծապատիվ պարոն հեղինակ! Հետաքրքրվելով, թե ինչո՞ւ հասարակությունը այսպես յեռանդով գնում է Զեր ամենահարգելի գրքերը, յես կարդացի դրանք և ինձնից բղիսեցին հետեւյալ տողերը.

«Իմ հուսահատ հոգու մեջ,  
Վորպես ճահճի շոշաններ,  
Ճաղկեցին ու փրթեցին  
Ազատ կանչի ցեղաններ,  
Բայց ավանդ, շուտ բառամած՝  
Մրժի խորդում փրեցին  
Ու զգիւյի, խոտեյի,  
Նեխած բուրմուճի փյեցին.  
Բայց դու հոգիս ցնցեցիր  
Քո վառ խոսնով կենասու,  
Ուժին բափով ցրեցիր  
Մառախուղը իմ հոգու.  
Յեվ յես նորից ուժ առած՝  
Վոտի յեշա արիացած,

Այժմ հպարտ, պանծալի,  
Երձակում եմ յես խոզի  
Այրված մազի անուշ բուր...

Խորին հարգանոք՝  
Սիմեոն Յասրերով»:

Յեկ ուրիշ շատ քաղցր համակրություն պարունակող նամակներ եր ստանում մեր դրողը հասարակությունից: Իսկ սատանան, գրողի հավատարիմ ուղեկիցը, ծիծաղելով փսփսում եր նրա ականջին: «Մի՛ շփոթվիր, անմի՛տ. այս բոլորը քո վարձատրությունն ե, դու այժմ հասարակության համար ես, ինչպես ջանել սիրուհին՝ զառամյալ ծերունու: Բացի դրանից, տըրտում մի ձևացիր, վորովհետեւ—ծածանը սիրում ե, վոր իրեն տապակեն սերի մեջ, իսկ դրողը—վոր. իրեն խեղդեն փառքի ծուխի մեջ: Խո՛-խո՛-խո՛»!

Յեկ ահա մեր յերիտասարդը սկսեց կամացուկ յերևալ իր վրա սիրահարված հասարակության աչքին: Տեսնում ե—վոր այդ հասարակությունը ծափահարում ե իրեն: Յեկ նա սկսեց դրան ընտելանալ, ինչպես հարբեցովը՝ ողիին, և նրա համար տիսուր եր ապրել առանց ծափահարությունների, ու մեր յերիտասարդը սկսեց փքվել:

Ահա՝ մեկ անգամ մի մողեռն տեղում ամբոխը շրջապատեց նրան, գեմ արեց պատին և ծափահարելով՝ զգացված գոչում եր, «Բուա՛վո, բուա՛վո»: Իսկ նա սկսեց ամբոխի առաջ սիրալիք ժպտալ,—և այդ նրա համար այնքա՞ն հաճելի յեր, քաղցր, վոր կարծես նրան մեղրի մեջ տապակում լինելին...

Առաջին անգամն եր նա հասարակություն տեսնում այսպիսի մոտիկ տարածության վրա... Յեկ հանկարծ նա իրեն վատ, նույնիսկ շատ վատ զգաց. նրան թվաց, վոր հիմա կսկսեն իրեն թեգերի տակը խուտուտ տալ, և նրա գլխում ծագում եյին զանազան անհեթեթ մտքեր: Թվում եր, վոր ամբոխից յուրաքանչյուրը նայելով նրան, իր մտքում համեմատում եր իր ականջները դրողի ականջների հետ, կամենալով ծատիվ վորոշել, թե վորին ե յերկար: Յեկ մեր յերիտասարդը զգաց, վոր իր ականջները յերկարում ու հասնում են հսկայական չափերի: Իսկ ամբոխը նայում եր և գոչում, «Բուա՛վո, բուա՛վո»: Այն ժամանակ մեր յերիտասարդի մտքում բորբոքվեց չար կասկած—թե արդյո՞ք ինքը իրենը չի պատկանում, և նա մտածեց. «Նրանք ինձ իրենց սեփականությունն են համարում և հիմա կսկսեն ինձնով գնդակ խաղալ»... Իսկ սատանան, կանգնած նրա յետեղում՝ զգվելի կերպով քրքջում եր—«Խե-խե-խե,

տե՛ս՞։ Նայեց մեր թշվառ յերիտասարդը և ի՞նչ տեսավ。—տաս հոգին դարձել եր մի քանի հարյուր և շարունակ ծափահարում եյին։ Ամբոխի աչքերը, վորպես հարյուրավոր ասեղներ, խրվում եյին մեր յերիտասարդի կրծքի մեջ, և նա շրփոթված՝ նայեց ամբոխին ու տեսավ, վոր նրանց դեմքերը միանում ու կազմում են մի մեծ, մոռայլ և ստրկական դեմք, և դրա վրա չկային աչքեր, այլ դրանց փոխարեն միայն յերկու պղտոր բծե՛ր, և այդ դեմքի վրա քիթը այնպես յերկար եր, ինչպես փղի կնճիթը։

«Նայի՛ր, — ասաց սատանան դիվային ծիծառով, — նրա առաջնորդնորը քաշել երկարացրել են նրա քիթը, բայց չեն վառել նրա սրտի կրակը, և ահա նա կույր ե։ Նայի՛ր, ինչպիսի լեզու ունի նա, նայի՛ր։»

Մեր հերոսի աչքերի առաջ շարժվում եյին ահագին, հաստ պոռշները՝ կազմելով մի խորը, սև փոս, վորի խորքում թոթովում եր ինչ-վոր շարժուն, կարճ, մսի հաստ կտոր, վոր դուրս եր տալիս՝ «Բռա՛-ա՛-վո, բռավո»։

«Յես, պարոններ, հավատում եմ ձեր անկեղծությանը։ Բայց ինձ համար անհասկանալի յե, թե ինչով ես արժանացա այսպիսի ջերմ համակռությունների։ Յերբեմն, գիտեք, ինձ թվում ե, վոր դուք ինձ սիրում եք նրա՛ համար, վոր

յես չեմ հագնում սյուրտուկ, և իմ պատկերների մեջ հաճախ գործ եմ ածում անհամեստ խոսքեր, և յերբեմն ել ինձ թվում ե, վոր յեթե յես սովորեյի ձախ վոտքովս գրել լիրիկական վոտանագորներ, դուք ավելի ջերմ, ավելի մեծ ուշադրությամբ կվերաբերվեյիք դեպի ինձ։»

— «Բռա՛վո, բռա՛վո», — դուրս ժայթքեց ամբոխի միջից։

«Յեվ, գիտեք, ինձ թվում ե վոր դուք իսկական ընթերցողներ չեք, այլ միայն համակրողներ։ Ընթերցողը գիտե, վոր վոչ թե մարդն ե գնահատելին, այլ մարդկային հոգին, և գրողի վրա այնպես չեն նայում, ինչպես կարծես յերկու գլխանի հորթի վրա։ Իսկական ընթերցողը նրան կարդում ե, բայց նրան չի հավատում, այլ ինքն ե մտածում գրվածքի մասին։ «այս այսպես ե, իսկ այս այսպես չե», և մտածելով, նա մի լավ բան ե անում, մի լավ գործ կատարում, իսկ դուք, պարոններ, վոչ թե գործ եք կատարում, այլ զալմաղալ սարքում, և իսկական ընթերցողներ շա՛տ քիչ կան յերկրիս վրա, իսկ այնպիսիներն, ինչպիսին դո՛ւք եք, — վորքան ուզեք։ Զեռքս խղճիս վրա դրած՝ յես պետք ե ասեմ, վոր վո՛չ մի համակրանք, վո՛չ մի հարգանք չեմ զգում դեպի ձեզ... Ընկերներս ասում են, վոր պետք ե հարգել հասարակությունը,

բայց վոչ վոք չկարողացավ բացատրել, թե ինչո՞ւ ի՞նչ եք կարծում, ի՞նչ բանի համար կալի յե ձեզ հարգել»:

Գըողը լոեց, հարցական հայացք ձգելով ամբոխի վրա: Վերջինս նույնպես լուռ երև և կարծես մի քիչ մուայլվեց:

Վորտեղից վորտեղ սառը քամի փշեց:

— Այ, տեսնում եք, — յերկար լոռությունից հետո ասաց զրողը, — դուք ինքներդ անզոր եք ասելու, թե ի՞նչ բանի համար կարելի կիներ ձեզ հարգել:

Մի ինչ-վոր շեկ մարդ բերանը բացեց և հաստ ձայնով արտասանեց՝ «Մե՛նք մա՛րդ ե՛նք»:

— Բայց շա՞տ կան արդյոք ձեր մեջ իսկական մարդիկ: Գուցե հազարից հինգը միայն այդպիսիները լինեն, վորոնք հաստատ հավատում են, վոր մարդը կյանքի ստեղծագործողն ու իշխողն եւնը իրավունքն եւ մտածել, խոսել, քայլել, — սուրբ իրավունքն եւ: Գուցե հազարից հինգը միայն ազտա կովում են այդ իրավունքի համար և անվեհեր ընկնում կռվի գաշտում: Զեր մեծամասնությունը կյանքի ստրուկն եւ կամ նրա լիտի խազեյինը, և դուք բոլորդ խոնարհ մեշշաններ եք, վոր ժամանակավորապես փոխարինում եք իսկական մարդկանց: այն բոլորը, ինչ վոր ձեզանում կամ մարդկային, — միմիայն զողոգիտական եւ Ահա

յես նայում եմ ձեր պղտոր և վախկոտ աշքերին ու յերկուղով տեսնում, թե վո՞րքան քիչ կան ձեր մեջ համարձակ, անկեղծ մարդիկ: Աղքատ եւ մեր յերկիրը համարձակ մարդկանցով, իսկ այժմ այնպիսի ժամանակ եւ, վոր մեզ հերոսները են պետք:

Մի քսան հոգի մեջները ճառախոսին դարձրին ու գնացին: Իսկ նա շարունակեց. — «Լավ, աշխույժ մարդը միշտ մի բանի ձգտում եւ, մի բան փնտրում, իսկ դուք ապրում եք խաղաղ, հանգիստ, անշարժ, — այնպես, ինչպես հրամայված եւ ձեզ: Զեր կյանքը անձուկ եւ մտածել ծուլանում եք, շարժվելուց վախենում: Զեր շուրջը, ամեն տեղ, ինչպես կոկետուհու հյուրասենյակում դարակների վրա դարսած չնչին, անպետք բանները, կիսով չափ փթած ավանդություններ են և զանազան կենսական որենքներ, վորոնք վոչ մի բանի պետք չեն: Այդ բոլորը խանդարում են ձեզ շարժվել, բայց այդ բոլորը ձեր փոքրիկ իդյալներն են, իսկ դուք չեք համարձակվում դրանցից ազատվել, թեև դրանք ձեր կապանքներն են կազմում: Յեկ յերբ քամին դաշտից մաքուր բուրմունք եւ բերում, դուք թույլ չեք տալիս, վոր այդ խառնվի ձեր մարմնից արձակված կեղտոտ հոտին, դուք վախենում եք, վոր ձեր սիրառ կարող եւ փասփել դրանից, և իսկույն փակում եք ձեր մարմնի բոլոր ող-

անցքները։ Անհանգստությունը գուք չեք սիրում, անհանգստությունը վախ ե պատճառում ձեզ, Բայց ձեղ մի նյութ պետք ե խոսակցության համար, պետք ե մի բանով զբաղեցնեք ձեր հյուրերին, և վորպես յեկեղեցու դռան մուրացիկները, դուք մեկնում եք ձեր ձեռքը դեպի գրականությունը, վոր այնտեղից մի բան վերցնեք՝ զբաղվելու համար։

«Գրականությունը վոչ սեր, վոչ ել ատելու-  
թյուն ե զարթեցնում ձեր սրտերում,—վոչինչ,  
բացի համակրություն արտահայտող աղաղակնե-  
րից կամ հայհոյանքից, պարսավանքից։ Դուք  
մարդիք չեք, դուք հանդիսականնե՛ր եք, դուք  
ամբո՞լ եք. կյանքը վոչինչ չեք կորցնիլ, յեթե  
դուք մի անգամից կորչեյիք, հեռանայիք՝ նրա-  
նից, յեթե բոլորդ գետնի տակն անցնեյիք՝ վոչինչ  
չեք փոխմիլ յերկրիս վրա»։

Գըողը վախից վակեց աչքերը, զգալով, վոր կարծես ասեղներով ծակծկում են իրեն։ Բայց յերբ նորից բաց արեց, նրա առաջ կանգնած եյին մարդիկ, —շատ, շատ սովորական մարդիկ եյին կանգնած նրա առաջ՝ ամուր պարիսպ կազմելով։ Նրանց դեմքերը ժպտում եյին, աչքերը փայլատակում մանկական բավականությամբ՝ կարծես նոր խաղալիքներ եյին տեսնում, և ամենին ինչ նրա շուրջը հասարակ ու սովորական եր:

Այդ ժակիտներից և սիրալիք հայացքներից գրողը  
իրեն լավ զգաց, վախկոտությունը անցավ Նրա  
սրտից և նա ուզեց հասարակությանը միքան ասել,  
մի բարեկամական, մտերմական խոսք ուղղել: Նա,  
փորքան կարող եր, խորը հառաչեց և ասաց՝ ձեռ-  
քը վճառված սրտին դնելով. — «Պարունակը! »...

— «Բոա՛վո, — Ս-ս-ս-ս-հանգի՛ստ»:

— «Ե....շ....շ....Նա ուզում ե խռովել»:

— «Պարոննե՞ր, ասացնա, ձեր ուշադրությունը քաղցր, համելի յե ինձ համար։ Յես, կարծեմ, հասկանում եմ ձեզ։ Յերբ յես փոքր եյի և զինվորական յերաժշտության ձայն եյի լսում, վազում եյի նրա յետեկից և ինձ ևս զբաղեցնում եր վո՛չ այնքան յերաժշտությունը, վորքան այն, թե ինչպես մեծ փողից փչող զինվորը ուղցնում եր այտերը։ Ծնորհակալ եմ ձեզանից, պարոններ»։

— «Բոավո», — գոչեց ամբոխը: — «Մենք սիրում ենք ձեզ», — բարձր ասաց մեկը:

— «Շնորհակալ եմ», մի անդամ ևս կրկնեց  
զբողը՝ զգացված և սիրալիր:

— «Решение»:

— «Պարոններ, — ձայնը բարձրացնելով գոչեց  
մեր հերոսը, — թույլ տվեք անկեղծ խոսել»:

— «Ри-ш-и-п»:

Իսկ սատանան կանգնել եր գըռողի յետևում  
և միշտ ծիծաղում եր:- Խորամանկ!

— «Դուք սարուկներ եք, վորովհետև սառիկներ եք։ Զեզ թակում են—լոռում եք, ձեզ վերափորում են—ժպտում եք։ Զեզ բարկացնում են միայն կանայք, յերբ համեղ ճաշ չեն պատրաստում, բայց դուք տանջվում եք կյանքի բարիքները վայելելու ագանությունից, դեպի միմիանց տածած նախանձից և ստամոքսի անմարտությունից։ Յերբ կոշիկը ցավեցնում են ձեր վոտքը, դուք հառաչում եք.

— «Ո՞, ինչ ճշմարիտ ե ասում Շոպենհաուերը։ Բայց «ազատություն» կոչը լսելով, դուք մտածում եք։ — «ոա ի՞նչ ե դուրս տալիս»... Սատանան ձեզ տանի։ Յեթե դուք իմանայիք, թե վորքան վողորմելի եք, վորքան զզվելի՝, ինչպես անտանելի՝ և ծանր են ձեր մեջ ապրել։ Զեզ ասում են։ — կյանքը սարսափելի՝ յե, կյանքը մոռայլ ե, նա ամբողջովին արյունով ե մավում, դուք չեք հավատում։ Զեր կյանքը միայն սարկական ե և վողորմելի, և յերբ ձեզ մատնացույց են անում մահը և այդ սարկության սարսափելիությունը, դուք անտարբեր եք մնում, հետաքրքրվում եք միայն մի բանով, թե արդյո՞ք գեղեցիկ ե ասված։ — եստեանե՛ր, վոր խեղդվում եք ցեխի մեջ։ գոնե այդ ցեխը շուտ կուլ տվեք վերջացրե՛ք։

Ամբոխը հետզհետե ցրվեց, նա չի սիրում

յերկար ճառեր։ Իսկ սատանան միշտ քրքջում եր, — չե՞ վոր նա գիտե այս բոլորի իսկական արժեքը։ Բայց իր պարտականության կատարումով հիացած՝ ճառախոսը վոչինչ չնկատեց։

— «Կյանքը՝ հերոսական մի պոեմա յե, իսկ մարդք վիճուպում ե նրա սիրաը և չի գտնում, ցանկանում ե ամեն բան իմանալ — և չի կարողանում, ճգնում ե ամենազոր դառնալ, — և նա անուժ ե իր թուլությունը հաղթելու։

— Դուք լսե՞լ եք վորե ե բան ճշմարտության, արդարության մասին, յերկրիս վրա ապրող բոլոր մարդկանց ազատ և յերջանիկ տեսնելու ցանկության մասին... Դուք կամենում եք միայն կուշտ լինել, տաք բնակարան ունենալ, ցանկանում եք խաղաղ ապրել — ահա ձեր յերջանկությունը։ Իսկ ձեր՝ ավելի՝ լավ յերջանկություն ձեռք բերելու ցանկությունը — մի գրոշով հինգ կոտեկ գնելու ցանկություն ե։ Յերջանկությունը ձեռք են բերում ամուր, ուժեղ բազուկներով, իսկ դուք — վախկոտ, թույլ, մեռած արարածներ եք, դուք նույնիսկ ճանձ չեք կարող վորսալ՝ առանց ուրիշի ոգնության, դուք նույնիսկ ճանձերի հետ կոփկ եք մղում թունավոր թերթիկների միջոցով՝ «Մահ ճանձերին»։ Յես խղճում եմ ճանձերին, նրանք տղզում են և գրանով խանգարում են քնել, բայց յես ու-


բախությամբ ձեզ համար կգրելի մի թերթիկ՝ «Մա՛ն ճանձերին», վորպեսզի դուք, կարդալով այն, թունավորվելիք անհանգստությամբ։ Տեսնում եմ, վոր յես ձշմարիտ չեմ.—այստեղ դուք վրդովվում եք... Յեվ յերբ դուք հանգիստ կյանք չեք վարում,—վորովհետև ձեզ չի՝ բավականացնում ձեր ստացած ոռճիկը ընտանիքին կերակրելու, կամ նրա համար, վոր դավաճանում են ձեր կանայք,—դուք հառաջում, փիլիսոփայություն եք անում, կյանքը ձեզ համար զզվելի և անտանելի յէ դառնում մինչ այն ժամանակ, յերբ ավելացնում են ձեր ոռճիկները և կամ թե դուք նոր սիրուհիներ եք դտնում։ Յեվ սկսում եք անդադար պառավական տրատունջներ, հիսաթափության զզվելի հառաջներ արձակել՝ անեծք կարդալով կյանքի հասցեյին,—դրանով դուք թունավորում եք ձեր մատաղ զավակների լսելիքը։ Դուք նրանց ուշադրությունը կենտրոնացնում եք կյանքի մանրությունների, նրա կեղտուտ կողմերի վրա, և նրանց ուղեղը բթացնում այն սրի պես, վորով կտրում են վոստեր, և վոչ թե գլուխներ։ Յեվ հետո յերեխաները, ձանցրացած ձեր պատմություններից, վոր անում եք կյանքի մասին, այն կյանքի, վորը դուք չեք ճանաչում,—դանդաղ գնում են ձեր հարթած շավղով՝ ժամանակից առաջ ծերացած, սառած,

100  
554

թուլացած, առաջ են գնում նրանք և փնտրում խաղաղ, հանգիստ և անվրդով կյանք, գտնում են այն ու ապրում խաղաղ, իրենց հայրերի ուրինակով։ Նրանք նման են նոր կրի, վորով ծեփում են հին շինության պատերը։ Այդ փթած, կեղտու շենքը ամբողջովին մնված ե մարդկանց արյունով, վորոնց նա ճնշել ե։ Նա դողդողում ե զառամությունից, նրա սիրալ դողում ե շուտափույթ խորտակվելու զգացմունքից և սարսափով սպասում հարվածին, վորպեսզի աղմուկով փլչի։ Յեվ ահա ուժերը՝ հարված տալու համար, աճում, մեծանում են, հազիվ են կարողանում զապկել և ամեն կողմից դուրս են ժայթքում անհամբերության բոցերով։

Կրորբոքվե՞ն, ավելի՝ կշատանան, և այն ժամանակ հին շենքը կցնցվի, փո՛ւլ կգա ձեր գըլխին ու ձեզ կճմլի, թեև դուք միայն նրա համար եք պատժի արժանի, վոր վոչինչ չեք արել։ Բայց կյանքում անմեղներ շկան...»։

✓ Միայն մի քանի հոդի եյին մնացել։ Նրանց մի մասը խղճահարվելով նայում եր գրողին։ Նրանք սիրում եյին կարդալ նրա գրվածքները, իսկ այժմ տիրությամբ եյին լսում նրա ճառը, վորովհետև այս ճառի մեջ վո՛չ մի եստետիքական բան չկար։ Վոմանք ել ծաղրում եյին։ Բոլորի համար ել ձանձրալի բերակա վոչ վոք չեր



վիրավորվում։ Ահա մի պատանի՝ դեմքը կնճռելով, զայրացած գոչեց։ «Այդ բոլորը խոսքե՛ր են, դուք այն ասացեք՝ թե ի՞նչ գործնական ծրագրներ ունեք»։ Իսկ մի հարգելի պարոն հառաջելով նկատեց. «Եհ, յես ել փոքր հասակումս ոռմանտիկ եյի»։ Սև հագուստով մի կին հարցը եց. «Սա ի՞նչ ե կանանց հայրոյում»։ Սատանան ծիծաղում եր...

— «Յես ձեզ պետք ե ասեմ և այն, վոր դուք շատ եք սիրում դժբախտ լինել։ Յես կարծում եմ, վոր դուք այդ դիտմամբ եք անում. ձեզ պետք չե դեպի միմյանց հարգանք և սեր տածել, և ահա դուք դժբախտանում եք, վորպեսզի ուրիշները ձեզ խղճան և կարեկցեն։ Ո՛, յերանի թե ունենայինք կյանքը սիրելու առողջ և զորեղ զգացմունք...Բայց չե՞ վոր դուք չեք սիրում կյանքը, դուք վախենո՞ւմ եք նրանից, դուք կամաց, գողի պես, նրանից պատառներ եք պոկոտում...Ստրուկ մարդիկ, խեղճ արարածներ, աստված ձեր գլխին ավելի՛ մեծ դժբախտություններ բերի, վորպեսզի դուք մի քիչ սթափվեք, մի քիչ կենդանանաք»։ Ճառախոսի առաջ կանգած յերեք հոգուց մեկը վիրավորվեց և ասաց. «Բայց մենք բոլորս խոմ այդպես չե՞նք...։ Յեզ վերջապես դա անարդարություն ե»։

— «Պարոննե՛ր, ինձնից արդարություն մի

պահանջեք, — այդ գոյություն չունի՛ կյանքում, գոյություն չունի՛ առայժմ։ — Ի՞նչպես կարող ե ձեր մեջ արդարություն լինել։ Յեզ դուք բոլորդ միակերպ վա՛տ եք։ Դուք ամբոխ եք, ի՞նչպես կարելի ձեզ լավերի և վատերի բաժանել։ Բոլորդ ել ձեր յերիտասարդ հասակում գիմնազիայում զինվել եք գիտություններով և ձեզ բոլորդ նույն բանն են սովորեցրել։ Յես կարծում եմ, վոր ձեզ լավ բաներ են սովորեցրել, վորովնետե, հավատացած եմ, վոր դուք ձեզ թույլ չեցիք տալ վատ բան սովորելու։ Յես դժվարանում եմ յերևակայել այնպիսի մի համալսարան, վորտեղ պատանիներին սովորեցնելին մարդատեցության, չինովիկական անտարբեր վերաբերմունքի գեպի կյանքը, չաղ պաշտոններ ստանալու ձգտումի և ուրիշ նույնանման խորագիտություններ։ Զգիտեմ ինչու՝ ինձ միշտ թվացել ե, վոր ա՛յդ չեն սովորեցնում. սակայն, յերբ դուք կյանք եք մտնում, այդ բոլոր գարշելիությունները չեն վերանում՝ ձեր ներկայությամբ։ Յես չեմ հավատում, վոր դուք ձեզ հետ նոր կեղտոտություններ եք բերում կյանքը, և յես այդ չեմ պնդի։ Յես միայն գիտեմ, վոր դուք, բացասելով հանդերձ սեփականության իրավունքը, տեր եք սեփական տների...Գիտեմ, դուք կարողանում եք ձեր մտածել, բայց հարցնում

եմ. — ի՞նչ եք արել կյանքի համար: Դուք բուլորդ միակերպ անտարբեր եք, ձեզանից նույնիսկ նրանք, վորոնք զգացված ասում են, թե վորքան ապականություն կա ձեր շուրջը... Փորձեցեք մաքրել այդ: Հեռացըրեք այդ ձեզանից: Վո՞չ, բայց ձեզնից լավերը, յես տեսել եմ, զզվանքով հեռու են մնացել զրանից: Մաքուր լինելու ձգտումը — վատ ձգտում չե, բայց մաքուր մարդը չի վախենա կեղանից: Խոստովանենք, վոր բոլո՞րս ենք մեղավոր, վոր կյանքը այսպես դաժան ե: Յերկրիս վրա գոյություն չունին արդարներ, առայժմ՝ վո՞չ: Բայց վո՞րտեղից եք դուք ձեռք բերել այդքան ստրկական վոգի, և վո՞րտեղ եք սովորել ստրկորեն վախենալ ձեր կաշվից: Յես պնդում եմ — բոլոր կեդրտոտ և զզվելի բաները, վոր ամեն քայլափոխում աչքի են զարնում, — արագ, ուժգին և այնպես պարզ կերպով են աճում զարգանում մեր շուրջը միայն այն պատճառով, վոր հիմնը ված են հաստատ հողի վրա — մեր սեփական կաշվից վախենալու ստրկական զզացմունքի վրա: Վոր կյանքը այսպես դաժան, ամոթաքե՛ր ե, դրանում մենք բոլո՞րս հավասարաշա՞փ ենք մեղավոր: Յեվ յեթե յես հավատայի անեծքի ուժին, յես կանիծեյի բոլորիդ, բայց յես հավատում եմ մի ուրիշ բանի, — վոր շուտով կդան

ուրիշ մարդիկ, համարձակ, անկեղծ և ուժեղ մարդիկ, — շուտով»...

— «Ե՛, բավակա՞ն ե», — ասաց սատանան ժպտալով: Մեր յերիտասարդը աչքերը վեր բարձրացրեց և ի՞նչ տեսավ. — նրա առաջ և նրա շուրջը վոչ վոք չկար: «Տարորինակ ե, ասաց նա, ո՞ւր գնացին: Յես դեռ չեմ վերջացըրել»...

— «Նրանք այրվեցին քո խոսքերի կրակից. հա՛-հա՛-հա՛... — Տեսնո՞ւմ ես առաստաղի մուըը — այդ ե բոլորը՝ ինչ վոր նրանցից մնաց: Գնա»....

Զգիտեմ թե հետո ինչ պատահեց մեր յերիտասարդի հետ. յես չեմ ուզում հնարել այս պատմության վերջը. յես զրանում վոչ մի լավ բան չեմ նախատեսում հերոսիս համար: Բայց յես հավատացած եմ, վոր լավ չե, յերբ գրողը շատ համակրողներ ունի: Յեվ յուրաքանչյուր մարդ, ով գործ ունի ամբոխի հետ, նա պետք ե իր շրջապատի ողը մաքրի ճշմարտության կարբույան թթվուտով:

## ՄԱՐԴԸ

Հոգեկան տխուր, մոայլ ժամերին, յերբ հիշողությունս վերականգնում ե անցյալի խոհեր և դրանից սառչում, կանգ առնում արյունս, յերբ միտքս՝ նման աշնան արեգի՝ լուսավորում ե ներկայի դաժան քառոր կարմիր և ահեղորեն ճախրում մի կետում, անկարող դեպ վեր թռչել, բարձրանալ, անկարող հառաջ, հառաջ սլանալ, — ահա իմ հոգու այդ ահեղ ժամին յերեակայությանս ամբողջ թափով յես իմ առաջն եմ պատկերացնում մարդու վեհ, վսեմ պատկերը գոռոզ:

Մարդ! իսկ և իսկ կարծես արեգի չքնաղ ցոլքն և թափանցում հոգուս խորքը և նրա վառ լուսո տակ, տիյեղերքի անսահմանության մեջ, ընթանում ե նա համբաքայլ, դանդաղ, վողբերգորեն գեղեցիկ մարդ! հառաջ և բա՛րձր...

Յեվ յես տեմնում եմ նրա ճակատը՝ հպարտ, գեղեցիկ ու մտախոհ. խորունկ, համարձակ աշերը, ուր վառվուում են ճառագայթները անվեհեր մտքի, այն վեհ մտքի, վոր կարող յեղավ հսկա տիյեղերքի չքնաղ ներդաշնակությունը յուրա-

ցնելու և ըմբռնելու այն ահեղ ուժը, վոր հուսահատության տխուր ժամերին աստվածներ և ստեղծում, խիզախ ըոպեյին—նրանց կործանում:

Մոլորված՝ տիյեղերքի անապատներում, միայնակ՝ հողի շերտուկի վրա, — հոշուում ե նա իր միտքը, տանջվում այս հարցով՝ «ինչու յե մարդ ապրում»: Բայց և նա քաջաբար հառաջ և շարժվում, հառաջ և բարձր՝ յերկրի և յերկնի բոլոր դադունիքը ըմբռնելու հաղթական ուղիյով:

Հառաջ ե ընթանում նա՝ արյունով վոռոգելով իր դժվարին, մենավոր և հպարտ ուղին և իր այդ արյան ջերմ կաթիլներից հյուսում և չքնաղ բանաստեղծության անթառամ փունջեր։ Նա իր գառնագին, վշտառատ հոգու հուսահատ ճիչից կազմում ե չքնաղ յերաժշտություն, նա իր ձեռք բերած փորձառությունից ստեղծում ե հսկա գիտությունն և ամեն քայլում գեղեցկացնելով մեր մոայլ կյանքը, ինչպես վառ արե, իր ճաճանչներն ե ուղղում դեպ յերկիր։ Նա ընթանում ե հառաջ և բարձր. — ուղղեցույց աստղ մեր յերկրի համար!...

Զըահավորված ուժերով մաքի՝ յերբեմն նման կայծակ վորոտի, յերբեմն սառն ու հանդիսատ, ինչպես սուր սուսեր, — ընթանում ե նա ազատու հպարտ, ընթանում հառաջ մարդ արարածը մարդոց առաջից և կյանքից բարձր, միայնակ՝

իր գործած սխալմունքների հանդեպ... Յեվ այդ բոլորը նրա հաղարտ կուրծքը ձնշում, նեղում են միշտ ահեղորեն, ու վիրավորում սիրտը, հոշուտում ուղեղն և առաջ բերում նրա մեջ ուժգին զգացմունք ամոթի—այդ բոլորի համար—ու այդ բոլորը կործանելու, խորտակելու պատրաստվում:

Հառաջ ե գնում... Յեվ նրա կրծքում յեռում են բնազդները, զազրելի կերպով վայում ե ձայնը ինքնասիրության, ինչպես անամոթ մի մուրացիկ, վոր պահանջում ե վողորմություն. նրա սիրտն ու հոգին կծկվում, կաշկանդվում են կուռ կապանքներից, ամեն տեսակի զգացմունքներ իշխո՞ղ են ուղում դառնալ նրանում, ամե՞ն ինչ ճգնում ե տիրել նրա հոգուն:

Յեվ ինչպես մոլորակներն են շրջապատում արեգակը, այնպես ել մարդուն մի հոծ բազմությամբ շրջապատում են նրա վեհ մտքի, արարչագործ մտքի ստեղծագործությունները—նրա միշտ անհագ Սերը, քիչ հեռուն, նրա յետեւում քարշ ե գալիս Բարեկամությունը, նրան դիմավորում ե նվաղած Հույսը, ահա և զայրույթով ու համբերությամբ լցված Ատելությունը. իսկ Մահը մոայլ աչքերով նայում ե նրա թշնամական դեմքին ու սպասում նրան իր հանգիստ գրկում ընդունելու:

Հնության ցնցոտիներով ծածկված, նախապաշարմունքների թույնով համակված, այդ բուլորը թշնամաբար հետեւում են Մտքին—յերբեք չհասնելով նրա թոփչքին, ինչպես ազուավը չի կարող հասնել դեպ յեթեր ճախրող արծվի յետեւից,—և այդ Մտքի հետ նրանք առաջնության համար են մրցում ու շատ սակավ են նրանք միասին մի կարող և ստեղծագործ բոցով ի մի ձուլվում:

Յեվ հենց այստեղ ե մարդու մշտական կույր ուղեկիցը՝ համը ու մոայլ, խորհրդավոր Մահը, վոր միշտ պատրաստ ե համբուրել նրան և նրա սիրտը, վոր կյանքի ծարավով ե բոցավառվում:

Նա իր անմահ շքախմբում ճանաչում ե ամենքին. այդ բոլորից բաց նա ճանաչում ե և մեկին—Անմտությունը...

Թևագոր, հզոր, ինչպես մըրիկ կամ զոռ փոթորիկ, Անմտությունը հետեւում ե մարդուն, իր թևերի տակ առնում Մտքին ու ջանում, ճգնում իր վայրի պարին յենթարկել նրան...

Իր վողբալի շքախմբում նա ճանաչում ե յուրաքանչյուրին,—այլանդակ են, անկատար, շատ են թույլ նրա հոգեկան ստեղծագործությանց արդյունք արարածները...

Յեվ միայն Միտքը, մենավոր մարդու անբաժան ընկերը, միայն այդ Միտքն ե, այդ Մըտ-

քի բոցն ե, վոր լուսավառում ե նրա ընթացած փշոտ ուղիի խոչնդուաները, առեղծվածները այս ահեղ կյանքի, բնության գաղտնիքների թանձր խավարը, մարդկային մտքի մուայլ քառուր:

Մարդու անկաշկանդ, ազատ ընկերը—Միտքը—աչալուրջ մի սուր հայացքնի դիտում ե և անխնա լուսավորում ամեն ինչ.—

— Միրո ստոր ու խարդախ թակարդները, նրա ցանկությունը՝ սիրածին տիրելու, նրան ստորացնելու և ստորանալու ձգտումը և զգայականության խայտառակ պատկերը.

Հույսի յերկշոտ անդորրությունը և Ստությունը, նրա պճնված, զարդարուն քույր Ստությունը, վոր պատրաստ ե միշտ և ամենքին հանգստացնել, խաբել գեղեցիկ, սիրուն խոսքերով:

— Միտքը անխնա լուսավորում ե վերաբերմունքն անջերմ բարեկամության, խոհուն զգուշությունը, խիստ և դատարկ հետաքրքրությունը, նախանձի ու բամբասանքի սև բծերը:

— Միտքը տեսնում ե սև ատելության ուժը սոսկալի, և նա լավ գիտե, վոր յեթե լինի նա շղթայագերծ՝ նա կխորտակի այս յերկը վրա ամեն ինչ, կփշը, նույն իսկ չի խնայիլ և այն քիչ մարդկանց, վորոնք հետամուտ են ճշմարտության:

Միտքը անսասան հավատով լցված՝ լուսավո-

րում ե նաև ծարավը չար ու խայտառակ և անսահման անհագ իշխանության, վոր ջանում ե ստրկացնելու ամեն մի ձգտում. անկաշկանդ Միտքը լուսավորում ե և նրա սուր մագիները, և անզորությունը նրա ծանր լծի, և կուրությունը հիմար ու պղտոր նրա աչքերի:

Միտքը համարձակ կովի յե բռնվում նաև Մահվան հետ: Մտքի համար անտանելի, զզվելի յե Մահվան այդ հիմար, չար և անպատուզ սև ունայն ուժը, դրանք ատելի յեն այն ազատ, անմահ, վեհ Մտքի համար, վոր բյուրավոր աստվածներ ստեղծեց, վոր աշխարհին պարզեց սիստեմները փիլիսոփայության, գիտության,—բանալիները տիյերգերական առեղծվածների:

Մտքի համար Մահը նման է նրան, վոր ցընցոտիների մեջ գոնե գուռ ընկած՝ աղբանոցից իր կեղաստ պարեկի մեջ ե հավաքում անպետք ու փթած բաներ, բայց յերբեմն նա ստոր գողի պես կոփում ե նաև առողջն ու պիտանին:

Աղտոտության գարշ հոտով սնված, զարհուրանքների ծածկոցում գձձված, նա Մարդու առջև կանգնած ե վորպես համր, անվրդով, դաժան ու մուայլ ահեղ առեղծված, իսկ վառ ու պայծառ Միտքն ստեղծագործ՝ լցված չքնաղ հանդությամբ, հպարտությամբ, անմահության յերգն հընչելով՝ ուսումնասիրում ե սին, դաժան մահին...

Այսպես ե ընթանում ըմբռստ ու վսեմ արածած Մարդը, աշխարհի թանձր, մռայլ խավարի փշերի միջով հառաջ և բարձր, հառաջ և բարձր...

Ահա նա հոգնած՝ որորվում ե և տքնում, վհատված սիրտը հավատ ե փնտռում, հավատ, ջերմ հավատ, և բարձր, ուժգին աղերսում Սիրո քնքուշ փաղաքշանք:

Յեվ ի ծնե թույլ յերեք թռչուն—Վհատությունը, Հուսահատությունը և Վիշտը, այդ յերեք սև ու այլանդակ թռչունները չարագուշակ կոնչում են նրա հոգու բարձունքում՝ այս խիստ դաժան յերգը հնչեցնելով,—վոր մարդ մի չնշին մեղկ արարած ե, վոր կաշկանդված ե նրա գիտակցությունը, անզոր ե Միտքը, ծաղրելի՝ սուրբ հպարտությունը, և վոր թեկուզ նա ինչ ել անի՞ վերջ ի վերջո մեռնելու յեւ:

Դողում ե նրա հոշոտված սիրտը այդ սուր ու չար յերգի ձայնից, և վարանումների սուր ասեղները ծակում են նրա բորբոքված ուղեղը, նրա աչքերում փայլատակում ե վիրավոր սրտի արցունքը ցայտուն...:

Յեվ յեթե նրանում հպարտության կրակոտ կայծը չբռնկի, —Մահվան վախը իշխանաբար կքշի նրան ծավերի խավար, սև խուցը մռայլ Սերը, հաղթական ժպիտը դեմքին, կնդունի

նրան իր գրկում՝ բախտավորության բարձրածայն խոստմանց տարափի տակ ծածկելով տիսուր անդորությունը ազատ դառնալու և բնագդական անհագ բռնակալությունը...

Ստության հետ գաշինք կուած յերկչոտ Հույսը յերգում ե Մարդուն հանգստության քաղցրությունը, յերգում ե հաշտության խաղաղ յերջանկությունը, սիրուն խոսքերով որոր և կարդում քնեյած հոգուն, հրելով նրան քաղցր Ծուլության խորը տղմի մեջ ու դեպ ձանձրույթի—Ծուլության քրոջ—սպանիչ գիրկը:

Յեվ շնորհիվ այդ բորբոքված, անասնական զգացմունքի, նա իր ուղեղն ու սիրտը վարակում ե մահաբեր թույնով ստոր Ստության, վոր ուսուցանում ե պարզորեն, ազատ, թե Մարդ չունի այլ ուղի կյանքի, քան այն ճամբան, վոր տանում ե կենդանական հանգիստ պարզեղող ինքնաբավականության զգացմունքը...

Բայց միտքը հպարտ ե և Մարդը նրա համար՝ թանկի: Միտքը չար կովի յե բռնվում ստության հետ և կովի դաշտը—Մարդու Սիրտն ե:

Թշնամու նման Միտքը հետեւում ե Մարդուն ամեն տեղ և վորպես մի վորդ՝ անխնա կրծում, սրում ուղեղը, վորպես յերաշտ՝ ցամաքեցնում կուրծքը, վորպես դահիճ՝ տանջում Մարդուն. նրա խիղճը անգթորեն ձմլում ե վշտի սառն

զգացմունքը, վոր առաջացել ե կյանքի խիստ դաժան ճշմարտությունից, վորը թեև դանդաղ ե զարգանում, բայց տեսանելի յե մոլորությունների աղջամուղջի միջից վորպես մի ծաղիկ՝ հրաշեկ, բոցավառ, մտքից ծնունդ առած։

Բայց յեթե Մարդը անբուժելիորեն թունավորված ե Ստության թույնով և արդեն հաստատ հավատում ենա, վոր յերկրիս վրա բախտավորություն գոյություն չունի, բացի ստամոքսի և հոգեկան կուշտ զրությունից, հանգըստությունից և այլ կենսական ամենամանը հարմարությունից, այն ժամանակ նա՝ Միտքը անկաշկանդ, ցնծացող զգացմունքին ստրկանալով, տիրագին զեպ վար ե իջեցնում իր թևերնազատ և նիրհում, նիրհում ստրուկ, նահատակ թողնելով մարդուն իշխանությանը սրախ, զգացմունքի։

Յեվ տարածվող ամպի նման՝ Ստությունը կեղտոտ—Զանձրույթի քույրը — ամեն կողմից սողում, գալարվում ե շուրջը Մարդու, պատելով մաշող գորշ փոշիով և նըա ուղին, և սիրտն ու աչքերն։

Յեվ մարդը մոլորված՝ դառնում ե մի թույլ, անզոր արարած, դառնում կենդանի՝ առանց հաղարտության, առանց վեհ Մտքի...։

Բայց յերբ նրանում զայրույթը ցասկոտ բորբոքվում, կայծեր ե ցայտում, նա վառում ե իր

միտքն ու հոգին և նորից ընթանում հեռու, շատ հեռու, միայնակ՝ իր սխալմունքների տատասկների միջով, միայնակ՝ իր վարանումների այրող, շիկացած կայծերի միջով, միայնակ՝ հին ավերակների բեկորների միջով...։

Վեհ, հպարտ ու ազատ, նա արիարար նայում ե Ճշմարտության պայծառ աչքերին և դիմում գեղի իր վարանումները։

— Դուք սուտ եք խուսում, ասելով, վոր յես անզոր եմ, թույլ եմ, վոր կաշկանդված ե իմ միտքն ու հոգին. նա զարգանում ե, յես այդ լավ գիտեմ, տեսնում եմ, զգում,—նա ինձնում աճում, ծավալ ե ընդունում։ Մտքիս զարգացման համար եմ յես իմ տանջանքի ուժով և գիտեմ, վոր յեթե նա չզարգանար, յես առաջվանից ավելի չեյի տանջվի, մորմոքվի։

— Բայց յես ամեն քայլափոխում միշտ ավելին եմ ցանկանում, միշտ ավելին եմ յես զգում, միշտ ավելի խորը տեսնում, և իմ ցանկությանց այդ արագ աճումն—իմ Մտքի կարող զարգացումն ե։ Այժմ նա ինձնում կայծի յես նմանում. և չե՞ վոր կայծը հրդեհի մայրն ե, յես ապագայում մի հրդեհ եմ դառնալու տիյերքի թանձր խափարի մեջ։ Յեվ յես կոչված եմ ամբողջ աշխարհը լուսավորելու, ցրելու խափարը նըա թագցրած գաղտնիքներից, գտնելու

ներդաշնակությունը իմ և աշխարհի միջն, ինքս  
իմ մեջ ներդաշնակություն ստեղծելու և լուսա-  
վորելու կյանքի ամբողջ մռայլ քառու այս տաճ-  
ջալից յերկրի վրա, վոր պատած ե դժբախտու-  
թյան, վշտի, դառնության, չարության կեղծի-  
քով. յես կոչված եմ այդ բոլորը արմատախիլ անե-  
լու և անցյալի անդառնալի գերեզմանին հանձնելու:

— Յես կոչված եմ քակելու ամեն տեսակ  
մոլորությունների, սխալմունքների կուռ հան-  
գույցները, վորոնք կաշկանդում, կապում են  
վախկոտ մարդկանց սրտերը, դարձնում նրանց  
կենդանիների արյունուղտ, զզվելի մի հավա-  
քածու, վոր հոշոտում, պատառում են միմյանց:

— Ինձ Միտք ե տրված նրա համար, վոր  
շուռ տամ, խորտակեմ, կոխկոտեմ հինը, փթա-  
ծը, ամեն բռնություն, նողկալի չարիք, — և յես  
կստեղծեմ նորը, հրաշալին՝ իմբ ունենալով վեհ  
ազատության, բարփո, գեղեցկի և մարդկային իրա-  
վունքը հարգելու՝ Մտքի կուած՝ շենքը անսասան:

— Յես պետք ե հաղթեմ մարդկային թշվառ,  
ամոթաբեր ցանկությանց անհաշտ թշնամուն.  
յես կամենում եմ, վոր մարդկանցից (ԼЮДИ) յու-  
րաքանչյուրը լինի Մարդ!

— Ամոթալի, անմիտ ու անտանելի յես այս  
մեր կյանքը, ուր վոմանց զրկալից, ստրկական  
աշխատանքն ապարդյուն ե գործադրվում իրենց

համար և ուրիշներն են զրանց թափած արյուն՝  
քրտինքով անխղճորեն հագենում — և հացով, և  
հոգեկան շնորհքով:

— Անե՛ծք այն բոլոր նախապաշարմունք-  
ներին, կարծիքներին կանխակալ, սովորությունն-  
երին վատթար, վոր վոստայնի պես կպչում,  
գալարում, պատում են մարդկանց ուղեղն ու  
կյանքը: Նրանք չեն թողնում ապրել ու վայե-  
լել, նրանք բռնություն են գործադրում մարդ-  
կանց վրա. — յես նրանց կխորտակեմ!

— Իմ զենքը՝ Միտքն ե, իսկ Մտքի ազատու-  
թյան, նրա անմահության և ստեղծագործության  
հավիտենական զարգացման մասին ունեցածս ան-  
սասան հավատն — իմ կարող ուժի անսպառ աղ-  
բյուրն ե վճիռ:

— Միտքը ինձ համար հավիտենական և ճշմարիտ  
միակ ուղեցույցն ե այս մեր մռայլ, դաժան կյան-  
քում. նա մի կրակ ե կյանքի խայտառակ մոլորու-  
թյունների աղջամուղջի մեջ. յես տեսնում եմ, վոր  
նա ավելի ուավելի պայծառե վառփում, ավելի խորն  
ե նա լուսավորում արմատները գաղտնիքների, և  
յես իմ անմահական ճառագայթներով զինված՝  
գնում եմ նրանց յետևից — միշտ բարձր և հառաջ...

— Մտքի համար գոյություն չունին ան-  
խորաակելի կուռ ամրություններ: Ամեն ինչ ե  
նա շինում, ստեղծում. այդ հանգամանքը տա-

լիս ե նրան անկապտելի սուրբ իրավունք՝ խոր-  
տակելու այն բոլորը, ինչ արգելք ե հանդիսա-  
նում նրա զարգացման:

— Յես անվզրով գիտակցում եմ, վոր նախալաշարմունքները՝ հին ձշմարտությունների բեկորներն են, իսկ մոլորությունների ամպերը, վոր այժմ պտույտ են գործում կյանքի վրա, — այդ բոլորը առաջ են յեկած մոխրից այն հին ձշմարտությանց, վոր անխնա այրվեցին յերբեմն նրանց ստեղծող Մաքի վառ բոցերից:

— Յես լավ եմ զգում, վոր հաղթող են վոչ  
թե նրանք, վորոնք հաղթության պտուղներն են  
վայելում, այլ նրանք, ովքեր անվեհեր ընկնում  
են կռվում:

— Կյանքի խմաստը յես տեսնում եմ ստեղծագործության վեհ ուժի մեջ:

— Գնում եմ հառաջ՝ վորպեսզի վառվեմ ա-  
վելի վառ ու պայծառ, և հրաշեկ ճաճանչ սրբ-  
ուեմ կյանքի խափարի վրա, Յեվ իմ անկումը  
ինձ համար—իմ վարձատրությունը կլինի:

— Ուրիշ վարձատրություն՝ պետք չե ինձ. յես  
տեսնում եմ — իշխանությունը ամոթաբեր ե և ձան-  
ձրալի, հարստությունը՝ ծանր ե և հիմար, փառքը՝  
նախապաշարմունք, վոր առաջ ե յեկել մարդկանց՝  
իրենց գնահատելու անկարողությունից և նրանց՝  
ստրկորեն ստորանալու սովորությունից:

— Վարանումներ! դուք Մաքի կայծերն եք  
միայն, և ուրիշ վոչինչ։ Միտքը ինքն իրեն տան-  
ջելով՝ ձնում ե ձեզ իր ուժի ավելորդությու-  
նից և կերակրում ձեզ հենց իր ուժով.

— Կզա՞ ժամանակ, վոր իմ կը ծքում մի վեհ  
ստեղծագործական բոցով ի մի կձուլվի զգաց-  
մունքների ալ խանդը անմահ Մտքիս հետ և  
այդ բոցով յես կվառեմ, կլուսավորեմ կույր հո-  
գիներում բուն դրած բոլոր մթությունները,  
դաժանություններն ու չարությունները. յես  
կնմանեմ այն աստվածներին, վոր Միտք են  
ստեղծել և ստեղծում են!...

Ահա նորից վեհ ու ազատ, իր հպարտ գլուխը բարձր բռնած, ընթանում ե նա դանդաղ, բայց անհողողող քայլերով, նախապաշարմունքները վոտնատակ տալով, միայնակ՝ մռայլ մոլորությունների թանձը ու խափար մշուշի միջով. Նրայետևում կանգնած ե անցյալի փոշին ծանր ամպերի, նրա առջևում—առեղծվածների մի մեծ, հսկա կույտ, վոր անվրդով սպասում ե նրան:

Նրանք անհամար են, վորպես աստղերը յերկ-  
նի խորքերում, և—անվերջ և Մարդու ուղին:

Սյուզես ընթանում է խոռվահույր Մարդը հառաջ և բարձր, միշտ հառաջ և բարձր!...

ՀՀ Ազգային գրադարան



NL0317659

10.680

ԳԻԱԸ 15 ԿՈՄԵԿ



---

МАКСИМ ГОРЬКИЙ  
Молодой писатель.  
Человек.

---

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Никольская 10.